

Կ Ա Ր Գ

«ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՍԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՊԱՄՆԵՐԻՆ» ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՅՈՎՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ

1. Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Դ Ր Ո Ւ Յ Թ Ն Ե Ր

1. Սույն կարգը սահմանում է «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մատչելի բնակարան երիտասարդ գիտնականներին և ստեղծագործական միությունների անդամներին» բնակարանային ապահովության սոցիալական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում երևան քաղաքի Պարույր Սևակի 8 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի բնակարանների բաշխման (այսուհետ՝ բնակարանների բաշխում) սկզբունքներն ու ընթացակարգը:

2. Բնակարանների բաշխումն իրականացվում է հետևյալ սկզբունքների պահպանմամբ՝

- հրապարակայնություն և թափանցիկություն,
- առաջնային արձագանքում ծրագրի հիմնական շահառուների կարիքներին,
- բաշխման ընթացքում հավասարության սկզբունքի ապահովում,
- բաշխման ընթացքում սուբյեկտիվ մոտեցումների բացառում,
- շահառուների մասնակցություն բնակարանների բաշխման գործընթացին:

3. Շահառուների միջև բնակարանների բաշխումն իրականացվում է հրապարակային վիճակահանության միջոցով:

4. Սույն կարգը հրապարակվում է «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության ինտերնետային կայքում:

2. Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Յ Ի Ն Վ Ի Ճ Ա Կ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Յ ՈՒ Ն Ը

5. Հրապարակային վիճակահանությամբ որոշվում է յուրաքանչյուր շահառուի բնակարանը (վիճակատոմսերում բնակարանների նկարագրությունը ներառում է բնակարանի մակերեսը, սենյակների թիվը, հարկը, մուտքը և բնակարանի պայմանական համարը):

6. Ըստ բնակարանների սենյակների քանակի և մակերեսային նախընտրությունների շահառուները բաժանվում են համապատասխան ենթախմբերի: Վիճակահանությունն իրականացվում է յուրաքանչյուր ենթախմբում ներառված շահառուների միջև:

7. Առաջարկվող որևէ տեսակի բնակարանների քանակը շահառուների պահանջարկին չբավարարելու և սույն կարգի 15-րդ կետով սահմանված կարգով անցկացված նախնական վիճակահանության արդյունքում տվյալ ենթախմբից որոշ շահառուների դուրս մնալու դեպքում վերջիններիս հնարավորություն է ընձեռվում մասնակցելու այլ մակերեսով բնակարանների (եթե այդպիսիք առկա են) վիճակահանությանը:

8. Հրապարակային վիճակահանությանը շահառուն մասնակցում է անձամբ (անձը հաստատող փաստաթղթով), կամ ներկայացուցչի միջոցով (լիազորագրի առկայության դեպքում):

3. Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Յ Ի Ն Վ Ի Ճ Ա Կ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ը

9. Հրապարակային վիճակահանության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմակերպում և վերահսկում է վիճակահանության ընթացքը, ապահովում սույն կարգի

պահանջների կատարումը, արձանագրում է վիճակահանության արդյունքները, երաշխավորում վիճակահանության հրապարակայնությունը և օբյեկտիվությունը:

10. Հանձնաժողովը ձևավորվում է վիճակահանության անցկացման օրը:

11. Հանձնաժողովը բաղկացած է յոթ անդամներից: Հանձնաժողովի նախագահը (նշտական հիմունքներով)՝ Ծրագրի իրավախորհրդատուն է, իսկ քարտուղարը՝ «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության նախագահի խորհրդականը: Հանձնաժողովի մնացած 5 անդամներն ընտրվում են վիճակահանության անցկացման օրը՝ շահառուների կողմից, իրենց կազմից:

Վիճակահանության ընթացքն արձանագրվում է և կազմված արձանագրությունը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

12. Հանձնաժողովի լիազորությունները դադարում և այն լուծարվում է վիճակահանության արդյունքներն արձանագրելուց և «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության նախագահին ներկայացնելուց հետո:

4. Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ա Յ Ի Ն Վ Ի Ճ Ա Կ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Ը Ն Թ Ա Ց Ք Ը

13. Վիճակահանությունը կազմակերպվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական:

14. Նախնական վիճակահանությամբ որոշվում է հիմնական վիճակահանության մասնակիցների հերթականությունը և կազմը: Շահառուների յուրաքանչյուր ենթախմբի համար նախնական վիճակահանությունն իրականացվում է առանձին:

15. Նախապես հրապարակվում է յուրաքանչյուր ենթախմբի ցանկը և հնարավոր բնակարանների քանակը:

Այն ենթախմբերում որտեղ բնակարանների պահանջարկը գերազանցում է առաջարկին, նախնական վիճակահանությամբ որոշվում է ոչ միայն հիմնական վիճակահանության մասնակիցների հերթականությունը, այլև այն շահառուները ովքեր մասնակցելու են հիմնական վիճակահանությանը: Այս դեպքում նախնական վիճակահանության համար նախատեսված զամբյուղում կլինեն շահառուների պահանջարկի և բնակարանների առաջարկի տարբերության թվով առանց նշումների վիճակատոմսեր, որոնց դուրս բերող շահառուն ինքնաբերաբար դուրս կմնա տվյալ ենթախմբից և նրան կառաջարկվի ընդգրկվել այն ենթախմբում, որտեղ բնակարանների պահանջարկը չի գերազանցում առաջարկին:

16. Նախնական վիճակահանությանը շահառուները մասնակցում են ազգանունների այբբենական հերթականությամբ:

Հիմնական վիճակահանությանը շահառուները մասնակցում են նախնական վիճակահանությամբ սահմանված հերթականությամբ:

17. Շահառուն դուրս բերելով վիճակատոմսը, այն հրապարակայնորեն բաց վիճակում ցուցադրում է վիճակահանությանը ներկա մասնակիցներին և հանձնաժողովի անդամներին, ովքեր գրանցում են արդյունքը: Վիճակահանությանը մասնակից շահառուն տեղում ստորագրում է վիճակահանությանը մասնակցելու մասին անհատական արձանագրությունը (հավելված 1), որը պարունակում է տվյալներ նրա կողմից վիճակահանությամբ ընտրած բնակարանի մասին, ինչպես նաև նշում է վիճակահանության կազմակերպման և անցկացման հետ կապված իր դիտողությունները և առաջարկությունները, եթե այդպիսիք կան: Անհատական արձանագրությունը հաստատվում է «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության նախագահի կողմից և կցվում է հանձնաժողովի արձանագրությանը: Անհատական արձանագրության պատճենը շահառուի պահանջի դեպքում տրամադրվում է նրան:

18. Հիմնական վիճակահանության կազմակերպման համար նախապատրաստվում են թվով 4 զամբյուղներ, որոնցում առկա վիճակատոմսերից յուրաքանչյուրը պարունակում է տեղեկատվություն բնակարանի մասին:

Ըստ բնակարանի մակերեսի և սենյակների քանակի վիճակահանության զամբյուղները տարրաբաժանվում են հետևյալ կերպ.

- 1-ին զամբյուղ՝ 1 սենյականոց բնակարաններ,
- 2-րդ զամբյուղ՝ 2 սենյականոց բնակարաններ,
- 3-րդ զամբյուղ՝ 3 սենյականոց բնակարաններ,
- 4-րդ զամբյուղ՝ 4 սենյականոց բնակարաններ:

**«ԵՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Հաստատում են»

«ԵՊՀ շրջանավարտների միավորում»
հասարակական կազմակերպության նախագահ՝

_____ Ա. Քարամյան

« » 2011թ.

**«ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ» ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՐԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

**ԱՆ Հ Ա Տ Ա Կ Ա Ն Ա Ր Ջ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ք. Երևան

«__»_____2011թ.

1. «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մատչելի բնակարան երիտասարդ գիտնականներին և ստեղծագործական միությունների անդամներին» բնակարանային ապահովության սոցիալական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում Երևան քաղաքի Պարույր Սևակի 8 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի բնակարանների բաշխումը կատարելու նպատակով 2011թ. _____ ին կազմակերպված վիճակահանության ընթացքում, Ծրագրի շահառու _____ կողմից դուրս բերված վիճակատոմսում առկա բնակարանի տվյալները (ռեկվիզիտները) հետևյալն են՝ _____ քմ. մակերեսով _____ սենյականոց բնակարան: Բնակարանի մուտքը՝ _____ հարկը՝ _____, բնակարանի պայմանական համարը՝ _____:

2. Վիճակահանության կազմակերպման և անցկացման հետ կապված առաջարկություններ, կամ դիտողություններ շահառուի կողմից չեն եղել:

3. Առաջարկությունների կամ դիտողությունների առկայության դեպքում ստորև շարադրվում են դրանք և ստորագրվում շահառուի կողմից (այդպիսին չլինելու դեպքում նշումների համար նախատեսված մասում նշվում է լատիներեն Z տառը):

Ծրագրի շահառու _____
/ձեռագիր նշել շահառուի անուն ազգանունը և ստորագրել/

Վիճակահանության հանձնաժողովի նախագահ՝ _____

Վիճակահանության հանձնաժողովի քարտուղար՝ _____